

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

ԱՐԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ.

Այս վերնագրով մի բաւական ընդարձակ յօդուած է զետեղուած Բյւ. Школа ամսագրում որով հեղինակն առաջարկում է մի բոլորովին նոր ծանապարհ կրթութեան գործը առաջ տանելու համար։ Արդի կրթութիւնը՝ ընայած այն բազմաթիւ մանկավարժական գրքերին ու այլ միջոցներին, որոնք ծառայում են կրթութիւնը հեշտացնելու և արագացնելու համար՝ դեռ շատ ու շատ պակասութիւններ ունի, և դժգոհների դանդաւան օրաուր աւելի բարձրաձայն և աւելի բազմակողմանի կերպով է յայտնուում։

Գանգատուող ու դժգոհ անձերին երկու խմբի կարելի է բաժանել՝ գործնական և բարոյական։ Առաջինների համար կրթութիւնը շատ թանկ է նըստում, արդիւնքը սպասածից պակաս է, կրթութեան ժամանակը շատ երկար է, կլասիքական կրթութիւնը շատ դժուար է և շատերին անմատչելի է։ Միւսները աւելի խորն են թափանցում՝ կրթութեան դասակարգի մէջ զարգանում է մեղկութիւն, մտքի ինքնուրունութիւն պակաս է. դրա փոխարէն հետեւում են նեարդային թուլութիւն, հիասթափութիւն, բացակայութիւն գաղափարականի և հաւատքի՝ այս բոլորը հոգեւոր կողմից իսկ Ֆիդիկայէս նորա դառնում են սակաւարին և ստանում մի ամբողջ շարք սուր պարբերական հիւանդութիւններ։ Այս բաների պատճառը բացատրելու համար հեղինակը մի քիչ հեռուից է սկսում՝ մանկանց սկզբնական դաստիարակութիւնից։

Սկզբում ծնողները հարկից աւելի հոգս են տանում մանկան վերայ, որով նորա հոգին և մարմինը բոլորովին մեղկանում են։ Յետոյ աւելացնում են հասարակական բոլոր պակասութիւններն ու կեղծիքները, աշխարհային քաղաքավարութեան գեղեցիկ գիմալի տակ. մանուկը տեսնում է, որ մէկի առաջ այլ բան են խօսում, յետեւից բոլորովին այլ բան կրկնում։ Գալիս է գիմնազիոնի շրջանը. սրա հետ միամիտ երեխան ոտ է դնում շապլուութեան, նորասիրութեան և դուարձութիւնների մի ասպարէզ, որ շուտով բաց է

անում նրա առաջ աշխարհածանութեան վերջին գաղտնիքը, և ապա նա սովորաբար ամեն ինչ կորցնում է՝ և հաւատ, և իդեալ, և առողջութիւն, և եռանդ, ևնհասկանալի դասերը, երկար և ծանր աշխատանքը տարիների ընթացքում նրան դարձնում են մի արարած, որ շատ քիչ նշանակութիւն է տալիս կեանքին և նորա երեւոյթներին։ Հարկաւ գտնուում են և այնպիսիները, որ այս բոլոր փորձութիւններից դուրս են գալիս անվնաս, թողնում քաշուում են գիւղ, հասարակ ժողովրդի մէջ և գործում յօգուտ ազգի, բայց դրանց թիւը շատ քիչ է։ Սակայն գործին ուրիշ աչքով նայողի համար դա մի ստոյգ առաջնորդ է կրթութեան սխալ ճանապարհից յետ կենալու համար, նա սովորեցնում է, թէ ուր պէտք է փնտռել կրթութեան բնավայրը, ապրել ժողովրդի մէջ բնութեան ծոցում՝ ահա գաղտնիքը, եթէ գիւղ գիմոյներից ոմանց չի յաղողուում երկար գիմանալ այնտեղ, պատճառը աշխատանքի մեծութիւնն է, հին սովորութեան ոյժը և քաջութեան պակասութիւնը։ Ուրեմն երեխայոց կրթութիւնը պէտք է տեղափոխել գիւղ։

Ինչու մեր որդիքը ապրեն քաղաքի խեղդիւթմանոյրով մէջ, գիւղում ամեն բան բարեբար կերպով կազդէ, պարզ նիստ ու կաց, մաքուր, թարմ օդ, ազատ բնութիւն, Ի՞նչ հարկ կայ մանկան մատաղ հասակից բերանաբաց նայել զարդի և շոյալութեան առարկաների խանութների հսկայական պակէիներից, դատարկ և յաճախ վնասակար իրերով շլանալ և անգիտակցաբար զարգացնել իրենց ճաշակը կեանքի անպէտք շքեղութիւնների համար։ Թող մանկան շրջապատեն սաղարթախիտ անտառը, կանաչ, պտղաբեր գաշտը, գետ, բլուր և լեռ, Թող մանկութիւնից սովորէ նա դուարձանալ այն հազարաւոր անհամեմատ բարձր հրաշալիքներով, որ Աստուած պատրաստել է ամեն հասակի և աստիճանի մարդկանց համար, անխոր ընութեան իսկ ծոցում։ Բայց որ գլխաւորն է՝ քաղաքի երեխան իւր դաստիարակութեամբ բարոյականութեան բոլորովին հակառակ է գնում։

Նա լսում է աւետարանի «սիրիւր ընկերիդ» օգնիւր տառապեալին, խօսքերը, բայց գործով ցոյց տալու կատարեալ անհնարաւորութիւն է գտնում։ Աղքատը քաղաքում հալածուած էակ է. նորան հալածում է ոստիկանը, ծառան, Երեսայի մէջ զարթած բոլոր կարեկցական զգացմունքները խեղդուում են կեանքի իրական փորձերով։ Գիւղում այդ հնարաւոր է. փոխադարձ օգնութիւն, անձնազոհութիւն, հիւրընկալութիւն, հիւանդին խնամք տանել էլն էլն, այս բոլորը գիւղական կեան-

քի սովորական երևոյթներ են, սրբագործուած դարերի կիրառութեամբ, Քաղաքում գծադրութիւնը հոմանիշ է սրիկայութեան. գիւղում այդպէս չէ, Բայց գիւղի առաւելութիւնները սրանցով չեն վերանում:

Քաղաքում մանկանց ոյժը դարգացնելու և առողջութիւնը պահպանելու համար գիմում են զանազան կիսամիջօցներ. խաղ, մարմնամարզութիւն, Իսկ գիւղում ամառը պարտէղն ու բանջարանցը, տնային այլ և այլ աշխատանքներ տալուց եղանակների համաձայն աւելի օգտակար և կազդուրիչ են դառնում: Մաքուր օդում աշխատանքը դարգացնում է ոյժն ու ճարպկութիւնը, թոքերը զօրեղացնում և ննարդերը ամրապնդում, տոկունութիւն, հաստատամտութիւն և աշխատանքի սէր զարթոյնում: վերջապէս իսկական աշխատանքը ունի իւր արդիւնքը՝ մի տեսակ բարոյական բաւականութիւն, որից զուրկ են քաղաքի խաղերը: Այսպէս ուրեմն մտաւոր և ֆիզիքական աշխատանքների կանոնաւոր բաժանման հետ միացած գիւղի պարզ հասարակ կեանքը, հետի քաղաքի թունաւոր մթնոլորտից՝ հոգում և մարմնով կզօրացնեն կրթնող սերունդին: Եթէ մեզ, հասակ առածներին համար գիւղի օդը մի ինչ որ խաղաղ ու անգործ բան ունի, որչափ բարերար ազդեցութիւն պիտի ունենայ նա դեռ մաքուր ու չապականուած բնաւորութեանց վերայ: Մանաւանդ՝ եթէ ուսուցումն էլ կենդանի ու բնութեան հետ ներդաշնակ զընայ, որի համար շատ աւելի մեծ հնարաւորութիւն կայ գիւղում, քան քաղաքում:

Քաղաքում երեխան կրաւորական դեր է կատարում ուսուցման գործում: նա աշխատում է միտք պահել ինչ որ հաղորդում են վերացականապէս. նա դուրկ է աշխարհայեցողութիւնից, տարեցտարի աճող ուսման առարկաների բեռան ներքոյ ծնւում է: Գիւղում կրթութեան գործին օգնութիւն կհասնի բնութիւնը, որը դիւրութեան հետ ի միասին կտայ և աշխարհայեցողութիւն: Եթէ գիւղացի մանուկը ինքն իրան սովորում է կարգաւ բնութեան մատենը, ապա զբան միանայ նա և դաստիարակի առաջնորդող ձեռքը՝ որքան գործը պիտի կենդանանայ, մանաւանդ պիտի վերանայ մանկանց կրաւորական դերը:

Հեղինակը հարկ չի տեսնում բոլորովին փոխել միջին կրթութեան ծրագիրը, որովհետեւ դաստիարայայտիչ և հասարակաց պահանջի, բայց աւանդուած առարկաների մի քանիսի վերայ առանձին ուշք է դարձնում, որոնք շատ մեծ նշանակութիւն ունին աշակերտների բարոյական դարգացման հա-

մար: Նորա կարծիքով պէտք է փոխել նաև 5 ժամ աշխատանքը և դասաւանդութեան եղանակը:

Արդէն վաղուց նկատուած է, որ 5 ժամ շաբաթական աւանդումը ծանրաբեռնում է աշակերտի ուղեղը, նիւթը մնում է անմարս, որովհետեւ երեկոյեան սերտողութեան ժամերը ընկնում են մի այնպիսի ժամանակ, երբ արդէն օրուայ լարուած աշխատանքով թուլացած՝ նոյն իսկ սպառուած է լինում ննարգային ոյժը և թուլացած ամբողջ կազմուածքը: Աւստի անհրաժեշտ է երեք ժամ պարապմունք, երեք էլ նախապատրաստական, ինքնուրոյն աշխատանքի ժամեր դաստիարակի առաջնորդութեամբ (բոլորն էլ առաւօտեան): Նոր դասը ունի պատրաստի հոդ, նա թէ կենդանի կդառնայ և թէ խորը կնստի աշակերտի յիշողութեան մէջ, Իսկ ճաշից յետոյ պարապել կարելի է ֆիզիքական աշխատանքով (արհեստ, կար ևն) և օժանդակ (ուսում): զբերի ընթերցանութեամբ, որի մասին յետոյ, Գալով ուսուցման առարկաների զընահատութեան նա առանձին նշանակութիւն է տալիս կրօնին, մայրենի լեզուին և բնագիտութեան, որովհետեւ նոքա խորը կրթիչ նշանակութիւն ունին և նոցա լաւ կամ վատ հետեանքը ամէն անհատ զգում է իւր կեանքի ամբողջ ընթացքում:

Կրօնը պէտք է իրրեւ հիմք ծառայի կրթութեան համար, նա երկու կողմ ունի՝ իմաստասիրական և բարոյագիտական: Իմաստասիրականը խօսում է Աստուծոյ և տիեզերքի մասին, բարոյագիտականը՝ մարդու առ Աստուած և առ ընկերը ունեցած պարտականութեանց մասին:

Հնգամեայ երեխան ինքն արդէն հետաքրքրւում է արարչութեամբ և նորան գոհացնում են ս. Գրքի պարզ և խորիմաստ պատմութիւնները, Կողմնակի բացատրութիւն նորան անմատչելի է: Հասակի հետ նորա գիտութեան չափն աւելանում է և հայեացքն ընդարձակուում: Բնութեան երեւոյթների և ուժերի ուսումնասիրութիւնը, տիեզերքի մարմինների կարգաւ և որոշ օրէնքով կատարած շարժումը, տիեզերքի՝ մարդկային մտաց համար անընդգրկելի ներդաշնակութիւնը, արարչագործութեան խորին պարզութիւնն ու անհասանելի դադանքը լեցնում են մարդկային հոգին զմայլմունքով: Եթէ այս բոլորը կրօնական զգացմունք չէ, միթէ նա մանկական աշխարհայեցողութեան դէմ է, Իսկ ինչ կվերաբերի քրիստոնէական կրօնի բարոյական խնդիրներին, պարզ է, որ ամենաբարոյական մարդն անգամ չէ կարողացել իրագործել այս իւր կեանքի ամբողջ ընթացքում:

Հատ անխոհեմ են այն ծնողները, որ իրենք

կորցնելով կրօնական զգացմունք և հաւատ չեն ուզում զարգացնել այն իրենց որդւոց մէջ, Այսպիսով որդիքը զրկուում են բարոյական կեանքի գաղափարական հիմքից, Այսպիսիները արգարանում են, իբր թէ չեն ուզում ստել որդւոց առաջ, Բայց մի՞թէ դա սուտ է, երբ տալիս են այն, ինչ որ մանկութեան ժամանակ ստացել են իրենց ծնողներից իբր անգին աւանդ, և որն անշուշտ օգնել է նրանց բմբունելի դարձնելու կեանքը, Փորձը ցոյց է տալիս որ լաւ մարդասէր անձինք մանկական հասակում կրօնական կրթութիւն են ստացել, Եթէ մանկանց քնքոյշ հասակում չտանք կրօնական զգացմունք, երբ վերջինս դարձնի՝ սնունդ չգտնելով իւր շրջապատում, կիսեղբուի և այրական հասակում անհնար կլինի այն նորից զարգացնել:

Այդ տեսակ մարդը ներքին գաղաղութիւն կզգայ և յուսահատութեամբ իւր կեանքը՝ քարշկտայ, Իդեալիստը մանկական հասակում կրօնական զմայմամբ է ապրում, այրական հասակում պատրաստ ինքնազոհութեան, իսկ ծերութեան տարիներին ծուներ է իջնում բնութեան գեղեցկութեան և ներդաշնակութեան առաջ՝ նորա սիրտը միշտ ջնքմ է, հոգին արի և վստահ:

Նորան գուցէ խաբեն, գուցէ շատ անգամ կեանքի ծանր հարուածները նեղեն, բայց նա այդ բոլորը տանում է հեշտութեամբ և յուսով, Մեր որդւոց մէջ չմարնէք այդ երկնային պարգևը, որ այնքան նպաստում է կեանքի երջանկութեան:

Մենք մէջ բերենք ամբողջութեամբ հեղինակի մտքերը, որովհետև նոքա յատկապէս «ինտելիգենցիալին» ուղղուած մի յորդոր են ներկայացնում՝ այնպիսի մարդոց, որոնց նմանները դժբաղդաբար մեզանում քիչ չեն:

Մայրենի լեզուի ուսուցումից պահանջում է նա ամենամանրակրկիտ ուսումնասիրութիւն, մէջ է բերում լեզուի օրէնքները, համեմատական ձեւերը, նորա՝ ինչպէս մի կենդանի կազմուածքի, կեանքի, մանկական շրջանները, աճումը և ծերութիւնը, բանահիւսութեան ընտիր օրինակներ՝ ցոյց տալով հեղինակների ինքնուրոյն ձեւերը և դարձուածքները, և որ գլխաւորն է՝ լուսաբանութիւն մարդկութեան այն իդեալների, որոնք նոյնչափ հին են, որչափ հին է ինքը բանահիւսութիւնը, այս բոլորը պէտք է հաղորդել մանկան հիմնովին, նոքա զարթնցում և յուզում են աշակերտների մէջ բարոյական և էսթետիկական (գեղարուեստական) գաղափարներ, — Թողնենք այստեղ մի առ մի յիշել միւս առարկաները և մի քանի խօսք էլ մէջ բերենք գրքերի ընթերցանութեան և դպրոցական կառավարութեան մասին:

Մայրենի լեզուի աւանդման հետ սերտ կապուած է ընթերցանութեան խնդիրը, Ինչ տեսակ գրքեր տալ՝ ծանր ու լուրջ բովանդակութեամբ, թէ՛ գրքերն էլ մի տեսակ հանգստութեան միջոց համարել, ընտրութիւն անել նոցա մէջ, թէ՛ թոյլ տալ անխտիր կարգալու:

Ընթերցանութիւնն ուղղուած պիտի լինի երկու պահանջներ լրացնելու՝ գիտնական և գեղարուեստական, Առաջինը մի աշխատանք է, երկրորդը բաւականութիւն և հանգիստ, Երկուսին էլ հէնց մանկական հասակից անհրաժեշտ է ընտելանալ, Եթէ առաջինը զարգացնում է միտքը, երկրորդը վառում է երևակայութիւնը և կեանքի իդեալներ տալիս, Մէկի կամ միւսի գերակշռութիւնը անհատական հակումից պիտի յառաջանայ, բայց մէկի կամ միւսի բոլորովին դուրս ձգելը վնասակար է:

Գալով ընտրութեան խնդրին, ի նկատի պիտի առնել ընթերցողի հասակը, զարգացման չափը, շրջանը և հակումները, «Քիչ բայց լաւ» սկզբունքը այստեղ էլ անհրաժեշտ է պահել, վէրի վերոյ ընթերցումից խոյս տալու համար, Ծրարդից գուրս պիտի ձգել այնպիսի գրքեր, որոնք կեանքի՝ դեռ ընթերցողներին անհասկանալի, կողմն են նկարագրում, այլ և բարոյապէս հիւանդ և ընկած մարդկանց կեանքի նկարագիրը բովանդակող գրքեր, Ընթերցանութեան նպատակն է առաջնորդել մարդուն դէպի կատարելութիւն, Եթէ կեանքի մէջ կան ստոր ընդդդումներ, կան և աղնիւններն ու բարձրները, Ստոր բնաւորութեանց նկարագիրը մատաղ ընթերցողի հոգին կիսեղմութիւն է և յուսահատութեան կտանէ, որովհետև պատանին կեանքը չի ծանաչում և պատրաստ է իւր կարգացած մի քանի գրքերով դատել բոլոր մարդկանց, Ընդհակառակն բարձր բնաւորութեանց նկարագիրը կզարթնցնի նորա մէջ ցանկութիւն նրմանել նոցա և կատարելագործուել, Ի դուր չէ, որ ընթերցանութիւնն էլ դասում են վարակիչ հիւանդութեանց կարգը:

Առաջնորդից չպիտի հետեցնել, որ գրքերը պիտ անտես առնեն կեանքը, բոլոր մարդկանց ներկայացնեն մարմնացած հրեշտակներ, այլ թէ պիտի ընտրել գրքեր, որ զրդում են դէպի բարին, ազնիւը, բարձրը և ոչ թէ զարթնցնել մարդկային հոգու մէջ ննջող ստոր կրքերը:

Հասուն դատողութիւնը կարող է գնահատել և ընտրել չար բարուց, այն ինչ պատանին, երբ մի անգամ խորասուզուում է մարդկային ստոր շահերի և բնազդութեան աշխարհում, նա ընդ միշտ կորած է ոչ միայն հառաբակութեան, այլ և նոյն իսկ իւր անձնական բազաւորութեան համար, որովհետև

տե նորա հոգին վարակուում է ստոր և զգուելի զգացմունքներով, որոնք սպանում են նորա մէջ ամէն մի բարի և ազնիւ շարժում: Այս ևս չպիտի մոռանալ, որ կեանքը աշխատանք է՝ անխտիր և անվերջ ընթերցանութեան համար ժամանակ չկայ, նա ունի և ուրիշ բազմաթիւ աշխատանքներ, պարտքեր, որից խոյս տալ չի կարելի:

Ընթերցանութեան խնդրից ոչ պակաս կարևորութիւն ունի և կարգապահութեան հարցը, որից շատ բան է կախուած մանկան ապագայի համար:

Միջնադարեան մանկավարժութիւնը թոյլ էր տալիս երեխայոց հետ վարուել խստօրէն, նոյն իսկ անողորմ կերպով: Թ.Ը. դարում դրան փոխարինեց «մարդասէր» ուղղութիւնը: Բայց շուտով այս վերջինս էլ կերպարանափոխուեց, խիստ փափկացաւ, մեղկացաւ, իսկ այդ շատ հեռի է «մարդասէր» կոչուելուց: Չափահաս մանկանց այնպէս են պահում և խնամում, որ կարծես դրանք հիւանդ լինեն կամ նոր ծնուած, նոցա զգուշացնում են ամէն մի պատահարից, ազատելով նոցա ամէն տեսակ պատասխանատուութիւնից՝ նոցա փշացնում են: Այն ինչ մանկական հասակի պահպանութիւնը այդպէս պէտք է չլինի:

Մատաղ հասակից պէտք է հաստատել մանկան եռանդն ու կամքը՝ մի բան, որ այնքան աչքի է զարկում իւր բացակայութեամբ, Ամէն մի յատկութիւն իւր զարգացման և հաստատութեան համար պահանջում է վարժութիւն և գործադրութիւն, այն ինչ մեր արդի դաստիարակութեան մէջ այդ չկայ, երբ ամէն բոլոր հայրըն ու մայրը ահ ու դողի մէջ «վայ կրնկներս, վայ կմրսես, վայ կլողնես, վայ կլնասուես» ևլն. ևլն. ասելով չեն թոյլ տալիս մանկան ինքնուրոյն մի քայլ անել, գործի յաջողութեամբ բարոյապէս մխիթարուել, անյաջողութեան պատասխանատուութեամբ ճշդուել և փորձուել. երբ հարկ կարիք, պարտականութիւն, կարգ և փորձառութիւն, անհրաժեշտութիւն և ուրիշ շատ այս կարգի գաղափարներ դատարկահնչիւն բառեր կլինեն և նոցա ներքին բովանդակութիւնը փորձով ըմբռնելի չի դառնայ, երբ մանուկն իւր պատասխանատուութեամբ չգիտէ մի գործ սկսել և վերջացնել, երբ նրա մէջ կատարած գործերի և յաղթած արգելքների գիտակցութեան չլիքան հաղար տեղից ընդհատուած է կողմնակի միջամտութեամբ, երբ դեռ ներկայացած դժուարութեան վերայ իւր բոլոր ոյժը գործ չդրած՝ նա օգնութեան ձեռք է տեսնում կարկառուած—կարող է մանկան մէջ զօրեղ և տոկուն կամքի կամ բնաւորութեան մասին խօսք լինել, Գիւ-

ղացի մանուկը, թէև անգիտակցաբար, բայց համարեա այսձանապարհով է զարգանում կարգապահութեան մէջ. ուրեմն որչափ արդիւնաւոր և փրկարար կլինի այդ, եթէ դրան միանայ և գիտակցական առաջնորդութիւնը:

Էստեւարար անհրաժեշտ է հիմնովին փոփոխել մեր կրթութեան գործի հետ կապուած հանգամանքները՝ քաղաքից տեղափոխել այն դէպի գիւղ, հինգ ժամ պարապմունքը վերածել երեքի և բոլոր մտաւոր կրթութիւնը ճաշից առաջ՝ մինչև կէսօր վերջացնել, փոփոխել դասաւանդութեան եղանակը՝ առաջ քաշելով այն առարկաները, որոնք մեր ապագայ ասպարիզի վերայ վճռական դեր ունին կատարելու. ամենամեծ ուշադրութիւն դարձնել ընթերցելի գրքերի և ընթերցանութեան եղանակի վերայ, Վերջապէս կարգապահութեան այն ճանապարհը ընտրել, որ արդէն դարերէ ի վեր գործադրուել է բնագոյրաբար գիւղական կեանքում հարկաւ մտցնելով նրա մէջ գիտակցութեան և ընտրութեան սկզբունքը, թողնելով նորա խոտելի կողմերը, իսկ ընտիրները աւելի առաջ քաշելով և զարգացնելով: Առանց այս հիմնական փոփոխութեանց զբաւար թէ կարելի լինի վերջ դնել այս յօդուածի սկզբում շօշափած տրտուներին:

Ս. Յ.



ՄԱՆՐԱԼՈՒԹՅՈՒՆ

Հազարեան ծնմարանի հնագոյն հայ գրչագիր Աւետարանը. — Տեղեկանում ենք, որ Մոսկուայի Հազարեան ծնմարանի Մասնագիտական քառնի Խորհուրդը վճռել է հրատարակել նոյն ծնմարանում պահուող հնագոյն հայ գրչագիր Աւետարանը (887 թուականի)՝ ծղովթեամբ պահպանելով գրչագրի թէ արտաքին ձեւը եւ թէ ուղղագրութիւնը, որ մեծ կարեւորութիւն ունի Աւետարանի բնագրի գիտական ուսումնասիրութեան համար:

Նիկողայ Ա. Կայսեր յիշատակարանը. — Ռուսաց կայսր Նիկողայ Ա. Պաւլովի ծննդեան յօբելանք տօնուեցաւ ամբողջ Ռուսիայում յունիս 28-ին մեծ շքով: Այս յօբելանի առթիւ «Ռուսիկ Վեստնիկ» հրատարակել է Նիկողայ Ա. կայսեր ինքնածնագիր յիշատակարանը: Յիշատակարանը 3 մասից է բաղկացած, երկուսը 1850 թուականից եւ երրորդը 1848 թուականից: Այս յիշատակարանները կարող են համարուել կայսեր խոստովանանքները, ինչպէս եւ նա կոչում է առաջին մասն (ma confession): Յիշատակարաններին մէջ արտայայտած գաղափարը մեծ օրինակաւորութեան սկզբունքի պահպանութիւնը ամբողջ Եւրոպայում: Նիկողայ կայսեր ծիղն էր ոչ միայն Ռուսիայում, այլ ամբողջ Եւրոպայում պաշտպանել միապետութեան գաղափարը: Նրան մեծ ցաւ են պատճառում